



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ք.Արտաշատ

N 223

„28“ 08 2018թ.

ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ներքին աուդիտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներով, և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարանի ներքին աուդիտի 2018 թվականի տարեկան ծրագիրը.

1. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի <<Արտաշատի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերությունում 2018 թվականի օգոստոսի 29-ից մինչև սեպտեմբեր 18-ը ներառյալ՝ 15 աշխատանքային օր, ընտրանքային կարգով իրականացնել ներքին աուդիտ՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի թիվ 143-Ն հրամանով հաստատված հավելվածի 8-րդ մասի պահանջի կատարման նպատակով:
2. Ներքին աուդիտի իրականացման շրջանակում ընդգրկել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի <<Արտաշատի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության կողմից 2015, 2016, 2017 թվականների ընթացքում, ինչպես նաև 2018 թվականի՝ մինչև աուդիտի մեկնարկման օրվա դրությամբ, իրականացրած ֆինանսական գործառույթները, գնումների գործընթացները, նախատեսված և կատարված փաստացի ծախսերի համեմատումը, աշխատավարձերի հաշվարկման կարգը, հաշվետվությունների արժանահավատությունը և համապատասխանությունը օրենքներին և այլ իրավական ակտերին:
3. Համաձայն Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի թիվ 143-Ն հրամանով հաստատված հավելվածի 177-րդ մասի՝ ընտրանքային կարգով իրականացնել դրամական միջոցների և նյութական արժեքների գույքագրում:
4. Հաստատել աուդիտի առաջադրանքի աշխատանքային խմբի անդամների և հրավիրված մասնագետների ցանկը՝ համաձայն հավելվածի:

ՄԱՐԶՊԵՏ՝

Գ. ՍԱՐԳՍՅԱՆ

ՑԱՆԿ

ԱՌԻԴԻՏԻ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԵՎ ՀՐԱՎԻՐՎԱԾ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ

Ներքին աուդիտի բաժնի պետի պաշտոնակատար՝ Սուրեն Քարամյան

Ներքին աուդիտի գլխավոր մասնագետ՝ Ատոմ Ատոմյան

Առողջապահության բաժնի պետ՝ Հայկ Բադալյան

Ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ՝ Ռաֆիկ Թարվերդյան

Իրավաբանական բաժնի գլխավոր մասնագետ՝ Նունե Հովհաննիսյան

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ

ՏԵՂԱԿԱԼԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝



ԱՁ ԴԵՐՄՈՅԱՆ